ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- մարտի 2023 թվականի №---Ա
ք. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի փետրվարի 13-ի №01/25.1/514-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 92 հասցեում գտնվող անշարժ գույքն (այսուհետ՝ Գույք) աճուրդային եղանակով աճուրդում հաղթող ճանաչված՝ քաղաքացի Արարատ Գևորգյանին օտարելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը 2023 թվականի մարտի 9-ի №ՍԾ/34.1-Մ2-2/752-2023 գրությամբ Ընկերությունից պահանջել է առանց Հանձնաժողովի համաձայնությունը նախապես ստանալու Գույքի աճուրդն անցկացնելու փաստի վերաբերյալ հիմնավորումներ և պարզաբանումներ, որին ի պատասխան սույն թվականի մարտի 15-ի №01/25.1/898-2023 գրությամբ Ընկերությունը պարզաբանել է, որ կազմակերպվելիք աճուրդի արդյունքներով համապատասխան պայմանագրի կնքումը, որպես աճուրդի էական պայման, պարտադիր կախման մեջ է դրվել Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ձևով աճուրդի արդյունքների առնչությամբ Հանձնաժողովից համաձայնեցում ստանալու հանգամանքից, ինչի մասին հստակ նշված է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) սույն թվականի հունվարի 18-ին հրապարակված՝ աճուրդի մասին պաշտոնական հայտարարության մեջ: Ըստ դրա՝ աճուրդում հաղթող ճանաչված

մասնակցի հետ Գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքվելու է Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ձևով աճուրդի արդյունքների առնչությամբ Հանձնաժողովից համաձայնեցում ստանալու օրվանից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում,

գ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 92 հասցեում գտնվող անշարժ գույքը քաղաքացի Արարատ Գևորգյանին օտարման գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,

2) Գործարքի առարկա հանդիսացող Գույքի օտարումից առաջացած գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մարտի 2023թ.